ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Պ-230-07.04.2022-ԳԿ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակ	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը**	**Առաջարկ (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան	«Զանգվածային լրատվության մասին» օրենքի նախագծի (Պ-230-07.04.2022-ԳԿ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) 6-րդ հոդվածի 5-րդ մաս	շարադրել հետևյալ խմբագրությամբ. «5) Լրագրողի հավատարմագրումը կարող է դադարեցվել նրան հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողի դիմումով կամ նրան հավատարմագրած պետական մարմնի կողմից: Ընդ որում, լրագրողին հավատարմագրած պետական մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ հավատարմագրումը կարող է դադարեցվել միայն, եթե հավատարմագրման դադարեցման՝ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնների խախտման համար գրավոր նախազգուշացվելուց հետո մեկ տարվա ընթացքում լրագրողը	Ընդունվել է	Ընդունվել է

		կրկին խախտում է սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնները»:		
ՀՀ Կառավարություն	Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մաս	ավելացնել հետևյալ նախադասությունը. «Հավատարմագրման կարգի և տվյալ մարմինների աշխատակարգի կանոնների խախտումը լրագրողի հավատարմագրման դադարեցման հիմք է»:	Ընդունվել է	Ընդունվել է